

Սեզոնային օրացույց

Նպատակ

Սեզոնային օրացույցն աղյուսակային մեթոդ է և հնարավորություն է տալիս նկարագրել մեկ տարվա ընթացքում համայնքում տեղի ունեցած փոփոխությունները:

Սեզոնային օրացույցը ցույց է տալիս տարվա ընթացքում տեղի ունեցած աղետները, դրանց ազդեցությունը, կլիմայական փոփոխությունները, բռնկված հիվանդությունները, եկամուտների նվազումը կամ աճը և այլն:

Սեզոնային օրացույցը հնարավորություն է տալիս պարզելու նաև, թե արդյո՞ք սեզոնայնության տեղաշարժ է նկատվում, ինչը հնարավոր է բացասական ազդեցություն ունենա առողջության, ապրուստի միջոցների, կենսական այլ կարևոր նշանակություն ունեցող ոլորտների վրա: Առաջարկվում է նախ դիտարկել ներկա իրավիճակը և հետո անդրադառնալ վերջին տասնամյակներում տեղի ունեցած փոփոխություններին, դիտարկման համար ընտրելով հնարավորինս երկար ժամանակահատված:

Գործիքը կարող է օգտագործվել բնակչության իրազեկությունը բարձրացնելու նպատակով, նկատի ունենալով, որ եղանակային օրինաչափությունների փոփոխությունների լույսի ներքո սեզոնային պլանավորման ավանդական մոտեցումները վերանայելու կարիք կարող է առաջանալ: Այն կարող է օգտագործվել ցույց տալու համար, թե ինչպես է փոփոխվում մշակաբույսերի ծաղկման, տնկման և բերքահավաքի ժամանակացույցը, եղանակային և առողջության հետ կապված նոր վտանգներ կարող են ի հայտ գալ կամ հները կարող են հայտնվել տարվա ոչ այն ժամանակին, երբ դրանք սովորաբար հայտնվում էին:

Կլիմայի փոփոխության ազդեցության որոշակի միտումը արձանագրելու համար սեզոնային օրացույցը համալրված է երկու աղյուսակներով.

- տարեկան տեղումների քանակի աճի/նվազման աստիճանը
- ջերմաստիճանային շեղումները (բարձրացում/նվազում):

Ակնկալվող արդյունքներ

Օրացույցը լրացվում է ընդհանուր ժողովի ժամանակ, որտեղ քննարկվում են տարվա եղանակների հետ կապված բնակավայրում տեղի ունեցող նշանակալից երևույթները ներառյալ սպառնացող վտանգների ակտիվացումը: Սեզոնային օրացույցի և աղյուսակների տվյալները բավականին արժեքավոր են, քանի որ համադրվում են նաև պաշտոնական վիճակագրության, ինչպես նաև դիսկերի գնահատման համար անհրաժեշտ բոլոր այն տվյալների հետ, որոնք կհավաքագրի ՎԽԿԲ թիմը:

**ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ և
ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՌԻՄԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ
ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ**

Ուժեղ քամիներ																				
Քարաթափություն																				
Հրդեհ																				
Սողանք																				
Այլ երևույթներ																				
Անասնահամաճարակներ																				
Ականապատված տարածքների հետ կապված վտանգներ																				

Համայնքում/բնակավայրում տեղումների տարեկան քանակի ավելացում կամ նվազում:

N	Տարեկան տեղումների քանակի նվազման աստիճանը	Երբվանից՝ Վերջին (նշեք) 1 – 5 տարին 2 – 5-10 տարին 3 – 10-15 տարին	Տարվա n՞ր եղանակներին (նշեք) ՁՄ/ԳԱ/ԱՄ/ԱՇ	Ջերմաստիճանի նվազում	Երբվանից՝ Վերջին (նշեք) 1 – 5 տարին 2 – 5-10 տարին 3 – 10-15 տարին	Տարվա n՞ր եղանակներին (նշեք) ՁՄ/ԳԱ/ԱՄ/ԱՇ
1.	Թույլ					
2.	Միջին					
3.	Բարձր					
4.	Շատ բարձր					

Համայնքում/բնակավայրում ջերմաստիճանային շեղումներ (բարձրացում/նվազում)

N	Ջերմաստիճանի բարձրացման աստիճանը	Երբվանից՝ Վերջին /նշեք/ 1 – 5 տարին 2 – 5-10 տարին 3 – 10-15 տարին	Տարվա n՞ր եղանակներին /նշեք/ ՁՄ/ԳԱ/ԱՄ/ԱՇ	Ջերմաստիճանի նվազում	Երբվանից՝ Վերջին /նշեք/ 1 – 5 տարին 2 – 5-10 տարին 3 – 10-15 տարին	Տարվա n՞ր եղանակներին /նշեք/ ՁՄ/ԳԱ/ԱՄ/ԱՇ
5.	Թույլ					
6.	Միջին					
7.	Բարձր					
8.	Շատ բարձր					